

Եզնկացիներն կը յիշեցնէ՝ թէ «ի ժամ հացին աղօթիւք պարտ է գոհանալ զԱստուծոյ, որ տուեալ է եւ պատրաստեալ է զկերակուրն» (Խրտ. ԺԳ): Մեր այս աղօթքը պիտի տեսնենք դեռ ուրիշ ճաշերու վրայ եւս տարբեր ձեւով:

Դ. Ճաշ¹, հաց², կերակուր³, ուտելի⁴ կամ ուտեստ⁵, ռոճիկ⁶, պարեմ⁷, սպաս⁸, եւ աղապետ կամ աղպետ⁹, այլ եւ այլ կոչումներն էին սովորական սննդեան, որ բնականապէս կը զանազանէր ըստ դասակարգի եւ կարողութեան: Ազնուականացը պիտի կարենանք երեւակայել փափուկ եւ համեղ, դատելով անոնց կոչնոց նկարագրէն՝ զոր պիտի տեսնենք յաջորդ գլխին: Հայ տիկնայք՝ որ «ի մանկութենէ իւրեանց սնեալ էին ուղղովք զուարակաց եւ ամճովք էրէոց» (Եղիշ. 174), յայտնի է՝ թէ աղոնք եւ այդպիսիք էին անոնց հանապազօրեայ ուտեստը: Ի՞նչ բանի սահմանուած էին անոնց եւ մեծատանց շտեմարանի ու մառանի մթերքը զոր տեսանք (աստ, 13

1. Տես վերեւ, 108. — 2. Փաւս. 52, 226. Եղիշ. 132. Սահ. 113. Փրպ. 532. Ս. Գիրք ստէպ: — 3. Եղիշ. 132. Մանդ. 154. Դատ. ԺԴ, 14. Մթ. Գ. 4, եւն: — 4. Խոր. 96. — 5. Փաւս. 129. — 6. Փաւս. 84. Եղիշ. 52. Փրպ. 267. Քրոն. Ա, 33. Պտմ. Ա. 163. — 7. Աղթ. 123. — 8. Փաւս. 114. Աւա. Գ. — 9. Խոսրով ի Հյկզ. վ. աստ. 7.